Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 36-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ 4
3. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6
4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 9
ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 9
5. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 11
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13
7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ 14

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 186-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	1. ՀՀ ջրային օրենսգիրք 2. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենք 3. ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշում, 4. ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի «ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 531-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 170-Ն որոշում, 5. ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի արձանագրության թիվ 33 քաղվածք 6. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» թիվ 1-ից մինչև 123

պայմանագրեր:
7. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020 թվականի «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2020թ. Ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների հաստատելու մասին» N 206-Ա հրաման:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը՝ ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել և վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշմամբ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառույցների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 48,654,991.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թվականի ինն ամիսների) ճշտված պլանը կազմել է 35,246,107.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 15,495,822.52 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,117,701.9 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 12,441,341.83 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ՝ բյուջեն կատարվել է 35.3 %-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի ինն ամիսներում նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 49 միջոցառում, որից չի իրականացվել 19-ն, այդ թվում՝ 4-ի մասով կատարվել է ֆինանսավորում:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու համար, որպես հաշվեքննության նշանակալի հոդվածներ ընտրվել է թվով 3 միջոցառումներ՝ 7,810,353.65 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննությամբ ընդգրկվել են հետևյալ էական փաստերը՝

1. «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի շրջանակում ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի և «Արագածոտն» ջրօգտագործողների ընկերության միջև 2020 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման թիվ 118 պայմանագրի 1.1. կետով սահմանվել է, որ գարնան նախապատրաստական աշխատանքների ավարտական կատարողական ակտերի հիման վրա կտրամադրվի 6,359.1 հազ. դրամի չափով սուբսիդիայի գումար: Սակայն ջրօգտագործողների ընկերությունը չի կատարել պայմանագրի պահանջը՝ տրամադրված գումարն ուղղելով էլեկտրաէներգիայի գծով առաջացած պարտքի մարմանը:
2. Չեն կատարվել նաև 11002 միջոցառման շրջանակում ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև 2020 թվականին կնքված պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման բոլոր պայմանագրերի 2.1 և 2.2 կետերի պահանջները: Համաձայն 2.1 կետի՝ ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ է մատուցում իր սպասարկման տարածքի ջրօգտագործողների ընկերություններին, այն դեպքում երբ այդ տարածքում ջրօգտագործողների այլ ընկերություններ չեն կարող լինել: Սակայն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողներին:

Պայմանագրերի 2.2. կետում 11 դրամ/խմ սակագինն ամրագրելիս հղում է կատարվել ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի արձանագրության թիվ 33 քաղվածքին, այն դեպքում, երբ ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ոչ մրցակցային ջրօգտագործման համար սակագները սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Բացի այդ, համաձայն պայմանագրերում մատնանշած ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվացքով հաստատված Ռազմավարության «Ոռոգման ջրի վճարների սահմանման մոտեցումները և կողմնորոշիչ մակարդակները» 4-րդ գլխի՝ 2020 թվականի համար ոռոգման ջրի վճարը (նվազագույն) նախատեսվել է 12 դրամ/խմ-ի չափով:

3. Բոլոր ջրօգտագործողների ընկերությունների կողմից չեն կատարվել նաև «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության շրջանակում 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 5-րդ կետի 5.1, 5.2, 5.3 ենթակետերի պահանջները սուբսիդիայի գումարների հանձնման-ընդունման կարգի պահպանման մասով՝ նշված կետով սահմանված փաստաթղթերը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն տրամադրվել:

4. Հաշվեքննությամբ արձանագրվել են նաև միջոցառումների շրջանակում նախատեսված ծախսային հոդվածներով պլանային ցուցանիշների էական թերակատարման փաստեր: Օրինակ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 5,959,593.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,615,938.03 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 25.4%: Նույն կերպ՝ «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,774,061.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,269,546.12 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 48.0%:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
23.02.2021թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

3. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 48,654,991.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թվականի ինն ամիսների) ճշտված պլանը կազմել է 35,246,107.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 15,495,822.52 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,117,701.9 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 12,441,341.83 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ՝ բյուջեն կատարվել է 35.3 %-ով:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2020 թվականի ինն ամիսներում նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 49 միջոցառում, որից չի իրականացվել 19-ն, այդ թվում՝ 4-ի մասով կատարվել է ֆինանսավորում:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու համար, որպես հաշվեքննության նշանակալի հոդվածներ, ընտրվել են ստորև բերված աղյուսակում ներկայացված հետևյալ թվով 3 միջոցառումները՝ 7,810,353.65 հազ. դրամ ընդհանուր գումարով:

2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների վերաբերյալ

հազ. դրամ

N	Ծրագիրը, միջոցառումը		Հոդվածը		Փաստը
1	1004-11002	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	452100	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	2,650,701.59
2	1004-31001	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	2,046,941.5
3	1004-31005	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	3,112,710.56
ԸՆԴԱՄԵՆԸ					**7,810,353.65**

ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող» N 1919-Ն որոշման 10-րդ կետի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին 1004 ծրագրի «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 2,856,008. 0 հազ. դրամի չափով սուբսիդիա: Ըստ 15 ջրօգտագործողների ընկերությունների կողմից 2020 թվականի համար ներկայացված ֆինանսական

հոսքերի հիման վրա ֆինանսական ճեղքվածքի մարման համար ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից ներկայացվել է 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակների հատկացման նախագիծ, որի հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020 թվականի N 206-Ա հրամանով հաստատվել են 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակներն՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների, իսկ 20.08.2020 թվականի N 1160-Լ հրամանով նույն գումարի սահմանում չափաքանակները փոփոխվել են:

«452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 2,856,008.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,650,701.59 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 93.0%:

Ջրօգտագործողների ընկերությունների մոտ 2020 թվականի ընթացքում առաջացած կրեդիտորական պարտավորությունների մարման համար ինն ամիսների կտրվածքով ներկայացված փաստաթղթերի (աշխատավարձ, հարկային և այլ կրեդիտորական պարտքեր) ուսումնասիրության հիման վրա՝ գումարների տրամադրման նպատակով, կազմվել են արձանագրություններ, որոնցում, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքված պայմանագրերում նշվել են ֆինանսական ճեղքվածքի մարման ուղղությունները:

2020 թվականի ինն ամիսներին ջրօգտագործողների 15 ընկերությունների հետ կնքվել են պետական բյուջեով նախատեսված թվով 123 սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր ընդամենը 2,650,701.59 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ 1-ին եռամսյակում 17 պայմանագրեր 462,680.9 հազ. դրամ, 2-րդ եռամսյակում 67 պայմանագրեր 1,375,731.6 հազ. դրամ և 3-րդ եռամսյակում 39 պայմանագրեր 812,289.1 հազ. դրան գումարով:

Ջրօգտագործողների ընկերությունների կողմից 3-րդ եռամսյակի արդյունքներով ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե են ներկայացվել հաշվետվություններ իննը ամիսների ընթացքում հատկացված սուբսիդիայի գումարների օգտագործման վերաբերյալ՝ ըստ ծախսային ուղղությունների:

31.09.2020 թվականի դրությամբ 15 ջրօգտագործողների ընկերությունների մոտ չծախսված գումարի մնացորդը կազմել է 13,068.96 հազ. դրամ:

«1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով տարեկան ճշտված պլանը կազմել է 6,929,073.1 հազ. դրամ, 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանը՝ 5,959,593.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝

1,203,414.0 հազ. դրամ, փաստացի ծախսը 1,615,938.03 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 3,112,710.56 հազ. դրամ (փաստի և ֆինանսավորման տարբերութունը կազմել է 1,909,296.5 հազ. դրամ, որից ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ 2020 թվականի ինն ամիսների համար վճարվել է 253,916.1 հազ. դրամ, իսկ վարկային միջոցներից 1,655,380.4 հազ. դրամ դրամարկղային ծախսն իրականացվել է 2019-2020 թվականներին ստացված Հիմնադրամի վարկային միջոցների մնացորդ գումարներից): Փաստացի ծախսը՝ հաշվետու ժամանակահատվածի պլանի նկատմամբ կազմել է 25.4%, իսկ փաստը (դրամարկղային ծախս)՝ փաստացի ծախսի նկատմամբ՝ 193.0%:

«1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով տարեկան ճշտված պլանը կազմել է 5,821,513.6 հազ. դրամ, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը՝ 4,774,061.9 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,101,706.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,269,546.12 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,046,941.5 հազ. դրամ (փաստի և ֆինանսավորման տարբերության գումարը կազմել է 945,234.9 հազ. դրամ, որից ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ վճարվել է 2020 թվականի ինն ամիսների համար 387,411.2 հազ. դրամ, իսկ վարկային միջոցներից 557,823.7 հազ. դրամ դրամարկղային ծախսն իրականացվել է 2019-2020 թվականներին ստացված Հիմնադրամի վարկային միջոցների մնացորդ գումարներից): Փաստացի ծախսը՝ հաշվետու ժամանակահատվածի պլանի նկատմամբ կազմել է 48.0%, իսկ փաստը (դրամարկղային ծախս)՝ փաստացի ծախսի նկատմամբ՝ 91.0%:

Հայաստանի տարածքային զարգացման Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ Ջրային կոմիտեին ներկայացվել է հավելված 1-ում նշված միջոցառումների վերաբերյալ Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.-30.09.2020 թվականի ժամանակահատվածի վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվությունների (համաֆինանսավորման և վարկային) ցուցանիշների հանրագումարներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվության տվյալներին:

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի շրջանակում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և «Արագածոտն» ջրօգտագործողների ընկերության միջև 2020 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման թիվ 118 պայմանագրի 1.1. կետի պահանջի հետ՝ ըստ որի 6,359.1 հազ. դրամ գումարը տրամադրվում է ընկերությանը գարնան նախապատրաստական աշխատանքների ավարտական կատարողական ակտերի հիման վրա վճարում կատարելու համար, մինչդեռ այդ գումարն ուղղվել է էլեկտրաէներգիայի պարտքի մարմանը:
2. Առկա են անհամապատասխանություններ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի շրջանակում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև 2020 թվականին կնքված պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման բոլոր պայմանագրերի 2.1. և 2.2 կետերի պահանջների հետ:

   Համաձայն 2.1 կետի՝ ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ է մատուցում իր սպասարկման տարածքի ջրօգտագործողների ընկերություններին, այն դեպքում երբ այդ տարածքում ջրօգտագործողների այլ ընկերություններ չեն կարող լինել: Սակայն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողներին:

   Պայմանագրերի 2.2 կետում նշվել է նաև, որ Ընկերությունը ծառայությունները մատուցում է 2016 թվականի օգոստոսի 25-ի ՀՀ կառավարության նիստի արձանագրության թիվ 33 քաղվացքով հաստատված 11 դրամ/խմ սակագնով: Սակայն ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն՝ ոչ մրցակցային ջրօգտագործման համար սակագները սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Ավելին՝ համաձայն պայմանագրերում մատնանշած ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվացքով հաստատված Ռազմավարության «Ոռոգման ջրի վճարների սահմանման մոտեցումները և կողմնորոշիչ մակարդակները» 4-րդ գլխի՝ 2020 թվականի համար ոռոգման ջրի վճարը (նվազագույն) նախատեսվել է 12 դրամ/խմ-ի չափով:
3. Առկա են անհամապատասխանություններ «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական

կազմակերպություններին» հոդվածի շրջանակում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 5-րդ կետի 5.1, 5.2, 5.3 ենթակետերի պահանջների հետ, որոնցով սահմանվել է սուբսիդիայի գումարների հանձնման-ընդունման կարգը, սակայն 15 ՋՕԸ-երի կողմից պայմանագրերի վերոնշյալ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն տրամադրվել: Գումարների ընդունման-հանձնման արձանագրությունների փոխարեն տրամադրվել են ածխատանքների ընդունման-հանձնման արձանագրություններ:

5. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» և «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառումների «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով կատարված ծախսերի դիմաց ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով ֆինանսավորում բացելու նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահին ուղարկել է հայտ-գրություններ համապատասխանաբար՝ 1,203,414.0 հազ. դրամ և 1,101,706.6 հազ. դրամ գումարի չափով ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով ֆինանսավորում բացելու նպատակով: Սակայն հայտերում փոխանցվող գումարները նշվել են ընդհանրական՝ առանց ըստ կապալառուների ներկայացման:
2. Հաշվեքննության ընթացքում պահանջվել է ներկայացնել «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի 31001 և 31005 միջոցառումների «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով կատարված աշխատանքներն (կատարողական ակտերն) ըստ կապալառուների և վճարումները, սակայն ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից դրանք չեն տրամադրվել՝ պատճառաբանելով, որ այն ներկայացնելու իրավասությունը պատկանում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:
3. Առանձին միջոցառումներով և հոդվածներով առկա են ցածր կատարողականներ, մասնավորապես, «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման

համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով 2020 թվականի ինն ամիսների փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 25.4%, իսկ նույն ծրագրով «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով՝ 48.0%:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեով նախատեսված առանձին միջոցառումներ թերի են կատարվել՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման և «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածներով ճշտված պլանի նկատմաբ փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար 25.4 և 48.0%:

2. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն 31005 և 31001 միջոցառումների «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով կատարված ծախսերի դիմաց ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով համապատասխանաբար 1,203,414.0 հազ. դրամ և 1,101,706.6 հազ. դրամի չափով ֆինանսավորում բացելու նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից ընդունել է ընդհանուր գումարի հայտ-գրություններ՝ առանց ըստ կապալառուների դրանց ներկայացման:

3. Չնայած նախորդ հաշվեքննության արդյունքներով ներկայացված առաջարկություններին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից չեն վերանայվել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի մասհանման հայտերի հիման վրա կատարվող վճարումների գործընթացում դրանց ձևավորման և շրջանառության նկատմամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթները և գործող ընթացակարգերը:

4. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի շրջանակում ջրօգտագործողների ընկերությունների հետ սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում ամրագրված պատավորությունների կատարման նկատմամբ՝ հանգեցնելով կնքված պայմանագրերի 2.1, 2.2, 5.1, 5.2 և 5.3 կետերի պահանջների չկատարմանը: Իսկ «Արագածոտն» ջրօգտագործողների ընկերության կողմից չի ապահովվել նաև սուբսիդիայի պայմանագրի 1.1. կետի պահանջը՝ տրամադրված 6,359.1 հազ. դրամը գարնան նախապատրաստական աշխատանքների ֆինանսավորմանն ուղղելու փոխարեն գումարն օգտագործվել է էլեկտրաէներգիայի գծով պարտքի մարման համար:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

1. Ապահովել «Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» և «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» ծրագրի կատարման ընթացքում ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերի վերանայումը՝ մասհանման հայտերի ձևավորման, դրանց ներկայացման և ընդունման, վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման գործում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին վերահսկողական գործառույթներ տրամադրելու նպատակով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին

1. Բարձրացնել բյուջետային ծախսերի պլանավորման մակարդակը՝ ներդնել գործուն մեխանիզմներ ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի, ինչպես նաև դրանց շրջանակներում միջոցառումների և հոդվածների համար նախատեսված ծախսերի կատարման ընթացքը վերահսկելու ուղղությամբ:
2. Խստացնել ջրօգտագործողների ընկերությունների պատասխանատվությունը ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված՝ պարտավորությունների ժամանակին և ամբողջ ծավալով կատարման նկատմամբ:
3. Բացառել ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրերով հատկացված գումարները այլ նպատակով օգտագործելու փաստերը:
4. 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառումներով կատարված ծախսերի դիմաց ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով ֆինանսավորում բացելու նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից ներկայացվող հայտ-գրություններն ընդունել բացառապես ըստ կապալառուների դրանց բաշխման վերաբերյալ տեղեկատվության:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (պարզաբանումներ), առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):